ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-- ----- 2026 թվականի №-Ա

ԱՐԼԵՏԱ ՊԱՐԳԵՎԻ ԱԶԻԲԵԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2026 թվականի սեպտեմբերի 4-ի №01/11.1/6185-2026 և սեպտեմբերի 24-ի №01/11.1/6658-2026 գրություններով ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Պտղնի գյուղի Պտղնի 2-րդ այգեգործական տարածքի 8-րդ թաղամասի №24 հասցեում գտնվող «VILUX by Ptghni» ցուցանակով շինության տարածքում հայտնաբերվել է Արլետա Պարգևի Ազիբեկյանի կողմից առանց թույլտվության 880-890ՄՀց և 1950-1965ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթներում շահագործվող բջջային կապի վերահաղորդիչ սարք,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Արլետա Պարգևի Ազիբեկյանին ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2026 թվականի սեպտեմբերի 30-ի №ՍԾ/34.2-Ղ4-2/5356-2026 գրությունը, որին ի պատասխան՝ Արլետա Պարգևի Ազիբեկյանը հայտնել է, որ դադարեցրել է գրության մեջ նշված սարքի շահագործումը,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ և Արլետա Պարգևի Ազիբեկյանի գրությամբ փաստվել է վերջինիս կողմից առանց թույլտվության 880-890ՄՀց և 1950-1965ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Արլետա Պարգևի Ազիբեկյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 880-890ՄՀց և 1950-1965ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արլետա Պարգևի Ազիբեկյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- ---------2026թ.